


Հ Ա Ս Ե

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան դր. ողջ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱԽԼՈՒՄ Անու փոխառեց վճարում է գրեմ պիտի ըլլան :

Չի հրատարակուած ձեռագրերն են
* ես չե՛մ տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր հաճածալիցովներէն :

ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Թ Ե Ր Թ

ՕՐԳԱՆ ԱՐՁԱՅԻՆ ԱՆԿԱՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Թի՛ ԱՐՇԱԼՈՍԻ եւ թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պիտի է շինեց նիւթագրութեան հասցեով քերթիս Մասնաւորներն, որ է՛

ԳԵՌՈՐԿ ՓՈՒՊԱՐԵԱՆ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶԱՐԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ZUSC 20 ՓԱՐԱ ՈՂՋ

ՆՇՏՐԱԿԸ
ԲՈՒՆ ՎԵՐՔԻՆ ՎՐԱՅ

Արաբկիրի Առաջնորդ Գեր. Տէր Մեհրուբեան Վրդ. Աշխարհուհուն, այժմէական գլխաւոր պատահաններէն մէկը շոշափող ԿՈՉ մը ուղղած է Եգիպտոսեան Արաբկիրցիներուն, զոր կը հրատարակենք ի ստորեւ : Նշորակը բուն վերջին վրայ է . և մեր Առաջնորդը շնորհաւորելի է, իր այս կոչովը ազգին մէկ շարաւալի վերջը տղայ տալու առաջնութիւնը իրացուցած ըլլալուն համար :

Իստախարակութեան և մտաւոր զարգացումի անհրաժեշտութիւնը ամէն պէտքերէ ալ նախապատիւ եղած ըլլալը հաստատուելու ջանքեր ընելու պէտքը չկայ այս քանի մը սեզմ տողերուն մէջ : Ասիկայ տարապարտոց աշխատութեան մը մատնուած ըլլալ կը նշանակէ . ուրիշ ոչինչ :

Տպագրութիւնը հայերու մէջ գոյութիւն ստանալէն ի վեր, չէ՛ եղած հանրութիւնը վարող զրիչ մը որ գաստիարակութեան աւագ կարեւորութիւնը չեշտած և զգացուցած չըլլայ ընթերցողներուն . իսկ մեր հիմնական ընթերցող, այդ ամէն գրուած ու խօսուածներուն մէկ պարզ կրկնութիւնը պիտի ըլլար, եթէ սակայն մեզմէ բաւական թուով նախապէս եղած այդ հրաւերներուն կարեւորութիւնը իրենց բուն «մտքովը» ըմբռնանա՞ծ, և ըստ այնմ վարուելու պատրաստ կամութիւնը ունին հիմայ :

Արաբկիրի կրթածարաւ մանուկներունը օգտիարակութեանը գործը բարձի թողի եղած պէտք է որ ըլլայ, քանի որ՝ ինչպէս կ'ըսէ մեր բարեջան Առաջնորդը, նիւթական անձկութիւնը կը տիրէ : Իսկ այս նիւթական սովը բառնալու նուերական պարտաւորութիւնը մեր, Արաբկիրցիներու, վրին վրայ կը ծանրանայ :

Գեր. Առաջնորդը իր կողմէ միմիայն եգիպտոսեան Արաբկիրցիներուն մէջ սահմանափակած է . եթէ այսպէս է, համարձակութիւն պիտի ունենանք ըսելու նորին գերապատուութեան թէ՛ մենք Ամերիկայ ալ շատ մը հայրենակիցներ ունինք, որոնք յօժարակամ պիտի փութան մասնակցել, եթէ հաւաքական և

օրինաւոր ձեռնարկ մը ըլլայ Արաբկիրի վարժարանաց վեճակը բարուրելու նպատակաւ :

Ասիկա մեր է՛ն նուերական պարտականութիւնն է, և Արշալոյս ի Խմբագրութիւնը՝ առաջինը պիտի ըլլայ նորին Գերապատուութեան կողմէն պատասխանող, և այսօրու յետ սկսեալ միջոցներ պիտի ձեռք առնէ յատկապէս Արաբկիրի համար ՎԻՐԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ մը կազմակերպել, քանի մը տարինեւրու համար լաւ վիճակի մը մէջ դրնելու նպատակաւ Արաբկիրի ուսումնաձարաւ մանկիկներուն արդի աննախանձելի դրութիւնը :

Անոնք որ իրենց ազգին իրական ծառայութիւն մը մատուցանել կուզեն, անոնք որ իրենց զեանքն մէջ օգտակար և ազդաշահ գործ մը ընելու բարի տրամադրութիւնը ունին, անոնք որ գիտեն ազնիւ ձեռնարկներու համար իրենց ետը դռնէլութիւնը առանց այլ և այլի իրենց աշխատութիւնը բերն մեզի՝ փրկելու համար մեր հայրենիքին զաւակները սղէտ և անուս մնալու անպատուութեան :

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՌԱՋԵՆՈՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՐԱՐԿԻՐ
ՀՈՄՍՐ 515

ՄԵՆՈՒՊԱՏԻՒ ՍԻՐԵԼԻԲ
ԱՐԱՐԵՍԻՐ ԱՋԿԱՅԻՆԻ ԱՐԱՐԿԻՐՈՒ
Ռեակտիւ Եգիպտոս :

Վեց - եօթը յաջորդական տարիներու մէջ սղութիւնն ու առեւտրական անձկութիւնը բոլոր գրած ըլլալով Գաղաքիս մէջ՝ լծուառութիւնը հեղհեղէ գատարկեց բարեկեցիկ կարծուած ընտանիքներու քանակն ու բոյնը :

Մեր աղջկան բոլոր հաստատութիւնները՝ եկեղեցի ու դպրոց, որոնք կապ ունին ուղղակի ժողովրդեան վիճակին հետ՝ նեղն են, սա պարագային ամենէն ծանր հարուածը կրեցին մեր դպրոցները ըլլայ նիւթապէս թէ բարոյապէս, որոնց պիտածէն իրարու չլիւթալուած իրարու լրացուցիչներն են և կամ մին միւսէն կախում ունի :

Համառօտ իմն պարզելով դրայրոցներու նիւթականին մատակարարութիւնը, զո՞հ պիտի մնայինք եթէ

500 ուսանողներու ծնողքներ կարենային վճարել զոնէ սահմանուած համեստ պիտածէին կէսը, և սակայն ցաւ է ըսել թէ անոնցմէ մեծագոյն մասը ձրիավարներ են և ՈՐԲ, որոնք միջին հաշուով 20-30 զրշ. ի մասնակցութեամբ մը մտտուկին վերայ ճնշող բեռ մը կը փութային թեթեւեղ թէ՛ և՛ ներկայիս մէջ աւնոնք ալ անկարող կը մնան նոյն ԱՆՆՇՈՆ ԳՈՒՄԱՐՆ իսկ վճարելու, որով դպրոցական ներկայ չըլլան խոշոր գումար բացի մը կ'ենթարկէ մտտուկը, որուն սակալուն համար գերբնական ոյժի մ'աջակցութեանը կը կարօտինք, զորս մեր բարեսէր և կրթասէր հայրենակցաց սրտին մէջ կը սիրենք տեսնել, որոնք իրենց ծանօթ բարեսիրութեամբ ինչպէս միշտ՝ այս անգամ ևս պիտի փութան օգնութեան հասնել իրենց փոքրիկ եղբայրներուն մտքի կեանքին մտուղին ի սպաս, չը նայելով որ այս տարի իրենց սովորական նուէրներովը հէք ժողովուրդ մը վերկեցին սովի ու սղութեան անողոք ճիրաններէն և վերահաս տաղնապէն, բայց չէ՛ մի որ անդին սերունդ մը պիտի փճանայ, դպրոցներու դռնէրը ակամայ դողել հարկագրութեամբ անոնց աւջիկ :

Վստահ ըլլալով Տիարք. թէ մեր այս կողմ անխտիր ամէն գասակարգի մէջ իր զարթուցիչ և ուժեղ ձայնը պիտի հնչեցնէ ամէն հայր սրտին մէջ որ իր քաջալերական արդիւնքը պիտի բերէ օր առաջ մեղմելու համար մեր այդ ցաւն ալ :

Այսու՝ այժմէն կը հաստատենք թէ միւթարութիւնը կ'զգանք մեր մէջ անգամ մը ևս վերահաստատուած տեսնելով այն ամուր հաւատքը, զոր կազմած էինք մեր ազգայիններու բարեսիրական տրամադրութեան և հոգեւանդն զգացումներուն նկատմամբ :

Մալթելով՝ որ նախախնամութիւնը վարձահատոյց ըլլայ Չեղ և յաջողութեամբ պսակէ Չեր բոլոր առաքինական ձեռնարկները, ինչպէս և երջանիկ կեանք պարզեւէ Չեղ և համօրէն Աղջին որոնց վասն՝

Մնամք միշտ ողջունիլ և օրհնութեամբ Աղօթարար Առաջնորդ Տեղապահ Հայոց Արաբկիրու ՄԵՀՐՈՒԹԻԱՆ ՎԱՐԿԱՊԵՏ

ՀԱՅ ԿՂԵՐԸ
ԵՒ
ՅՈՒՇԱՏԵՏՐՍ

Անցեալ յուշերէս հրատարուած և Սահմանագրական ոգիէն սոգորուած կուգամ հրատարակ նետել այն, ինչ որ սեւ օրերու՝ սեւ մոխիրներու ներքեւ թաղուած էր մտքիս մէկ անկիւնը :

Անկարելի էր ինձ չի վերջիչել այն կէտը՝ զոր տասնեակ տարիներ առաջ ականատես եղած ևս յիւթական անպատ թելագրութեան մը գրողուած տալու պէս որ իբր բանական էակ կարելի չէր անգամ մ'ալ չ'անդրադառնալ անոր շուրջ :

Լաւ չեմ յիշեր թուականը՝ երբ Կ. Պօլիս երթալու համար Արաբկիրէն ճամբայ ելանք մէկ քանի ընկերներով՝ և հասանք Սերաստիբայ, և ուր ստիպուած էր մէկ քանի ամիսներ մնալ Օր մը փոխադարձ այցելութիւն տուինք մեր վաղեմի բարեկամ Պ. Անթակէտի, որ քանի մը տարի առաջ հոն հաստատուած ևս փոխ-գիր կուտար Կ. Պօլսոյ և այլ տեղերու վրայ : Անուշ խօսակցութեան մը քաղցր վայրկեաններուն մէջ էինք . գրասենեակը մեզմէ ի դատ ոչ ոք կար, երբ յանկարծ ներս մտաւ երկայնահասակ, նիւար զեմքով և աչքերը կապիճներուն փակած երկայն մօրուքով մէկը, որ վրան հաղած էր քահանայական մի փիլիսոփայութիւն սեւ զղակ մը և վրան փաթուած տեղական գունաւոր մի շղարջ (եղգոս) : Ողջոյն ձեզ ըսաւ տխուր ևս խղոզէկ ձայնով մը . և մենք ըստ պատշաճի պատասխանեցինք - Օրհնե՛ա ի Տէր - սրտայոյզ շնչաով մը . . . : Կասկածներ և տարակոյտներ բարդ ի բարդ կը սրտապնդէին զմեզ ժամանակը փափուկ էր՝ կարելի չէր չի մտածել . գաղտագողի ակնարկներ կը փոխանակուէին իմ և ընկերջոյ մէջ :

Ես չեմքը կ'ընդլայնան . . . զո՞ւցէ լրտես մը, զո՞ւցէ ծպտեալ հետապնդող մ'ըլլար նա . . . : Քահանային ևս նստեցաւ գրասենեակին մօտ մեր բարեկամին գէմ գիծաց, ևս ընկերջոյ մեկնուածի նշաններ առի և երբ մեկնելու պատրաստ դիրք մը առինք մեր բարեկամը ստիպեց քիչ մ'ալ նստիլ՝ մինչեւ որ քահանային հետ ունեցած գործը կարգադրէ . և մենք յակամայս համակերպեցանք անոր :

Քահանային խօսակցութիւններն շատ յամր կընթանային ևս անկարելի կը մնային մեզ : Մինչեւ որ թողթ գրիչ երևան եկաւ, և այն ատեն յայտնուեցաւ քահանային ինքնութիւնը : Սերաստիոյ չըլլալայ գիւղերէն եկած էր իւր սրբոյն վրայ փոխ-գիր քաջելու, զոր Պօլիս կը գտնուէր այն ատեն : Միւր գաղափարային միջնորդը պահ մը պարզուեցաւ ևս յոյզերը թեկ թեկ սկսան թեթեւեալ՝ ու մեր միտքնեալ շրթանց վրայէն ուրախութեան ժպիտներ թոսն :

Ինչպէս ըսինք, մինք ստիպուած էինք մնալ՝ եւ ընդ փոքր գործոյն վախճանին սպասել : Մուրհակը գրուեցաւ մեր բարեկամին կողմէն եւ կարգալէն վերջ տուաւ Տէր հօր որ ստորագրէր : « որդի՛ս դու գրէ » ըսաւ Տէր-տէրը : ո՛չ Տէր հայր ըսաւ մուրհակագիրը՝ պէտք է դուք ստորագրէք : Ես գրել չեմ գրեալ կրկնեց Տէր հայրը : ԸՆԼԱՐ ժխտեց մեր բարեկամը պէտք է ձեր ստորագրութիւնը ըլլայ : Չեմ գրեալ գաւազն, ի՛նչպէս կը գրուի անու-նըս : Ի՛նչ է անուշիկ Տէր հայր : - Իմ անուշիկ կիրակոս է պատասխանեց նա : մեր բարեկամը գրիչը անոր ստղով ըսեցաւ հեղուկ կի-րա-կոս : քահանայ կոր-մբելով մէկ մը զէպի մեզ կը նույնք մէկ մնալ հեղուկ բարեկամին : վերջապէս շատ մը նեղուելէ վերջ գրեց եւ վերագար-ցուց : Տխուր՝ ու շատ տխուր տուա-մի մը առջեւ կը գտնէի ինքզինքս : Յոյզերս տխրութեան եւ սրտառու չա-նալիներու փոխանակուեցան : Այդ օրն էր որ զգացի Հայուն խեղճութիւնը : Գիւղի մը հովիտ, քահանայ՝ եւ անն երէց ու կարգով գրել չի դիտնայ :

Ո՛հ, ի՛նչ զարմանք, քահանայ ցաւալի ի՛նչ հրապուրիչ տեսարան, քահանայ մը որ կարգով գրել չգիտնայ, Ազգի մը ներկայն ու սպազան ուր համակ ժողո-վուրդ մը տնոր մէջ պիտի դտնէ իւր բարոյական եւ հոգեկան պաշարը : Քար սիրտ մը անդամ չէր կարելի չի զգած-ուել չի ցաւ իր այդ պարագային : Եւ յու-զուեցանք մակ մեկնեցանք մեր բարե-կամի սենեակէն :

Այդ օրն սկսած, հայ կղերք վեր-նագրով գրեք մը գրելու չ'նայելով զԵՐ-չիս տկարութեանը ի վեր հանելու հա-յուն վիճակը՝ կղերականաց ազիտու-թիւնը՝ օգտակարութիւնը եւ քահանայրը : Հազիւ թէ լինանաւ մասեցած էր, բանտկարութեան շարքումը հովերը վրայ հասան եւ չեմ գիտեր թէ՛ ո՛ւր եւ ո՛ր կողմ փչեցին սարին, կամ ո՛ր ո՛ւր ձեռք ինկաւ այն :

Պարագաները՝ պահ մը մոռացու-թեան մէջ թաղած էին այն խոտովք, զոր տարիներ անող զղացած եւ պար-տեղած էի, եւ երբէք նպատակ չուէի վերադառնալ անցեալ յուշերու՝ բայց «Արշալոյս» ի 246 Յունուար թիւը հը-րապուրեց զիս անգամ մը եւս պարտել հին յուշերս : Սոյն թիւին մէջ հանդի-պեցայ «սին տեսակ վանականներու», որոնք «Երուսաղէմի Պատրիարքու-թիւնը չենք ճանչնար» կ'ըսեն եղեր : Տարիներէ ի վեր միշտ թերթերու մէջ կը գրուին ու կը գրուին, Երու-սաղէմը, պարտը, վանականները եւլն, եւլն : Այդ ի՛նչ անլուծելի խըն-դիր եղաւ : Այդ թուականէն ի վեր աշ-խարհի վրայ շատ ծանր ու մեծ խնդիր-ներ լուծուեցան, բայց Երուսաղէմի խնդիրը դեռ կը մնայ անլուծելի Գորգ-եան հանգոյց մը :

Շատ մը հրապարակագիրներ շատ բաներ գրեցին անոր մասին : եզրն ան-հեթեթութիւնը պաշտող ուրիշներ ալ, որ Երուսաղէմը մինչեւ իսկ աճուողի հանելու ուղեցին, ճիշտ այն յիմար ար-տեսին պէս՝ որ մուկերը զնջելու համար ամբողջ տունը կրակի կուտայ :

Ո՛րն է դիւրինը, Երուսաղէմը ծա-խելը, թէ քահանայ մը վեղարար որնորու արարքը խիստ քննութեան մը անցնե-լով պատժելը : Ինչո՞ւ միշտ, զո՞ւրու-րու թիւններու կը վազենք սուտնց կա-րելին ի գործ դնելու :

Երուսաղէմ օրրալուայրը կրնայ կա-րող ձեռքերու յանձնուել, իսկ վանա-կաններէն մէկ մասը գաւառները զրկել որ ժողովուրդին օգտակար գանձալու աշխատին : Այո՛ւ, թող գաւառները զր-կուին, ուր սպիտակութիւնը տիրած է եւ քահանայն գրել կարգալու նոյն իսկ ըս-տորագրութիւն մը դնել չ'գիտէր : Բա-ւական է տղան գլխուս վրայ եղած փոր-ձանքները, քիչ մ'ալ իրենք թող չի բարդին :

Կերեւի թէ՛ Կ. Պոլսոյ Պատրիար-քութիւնը կամ գործադիր մարմինը ա-նուշագիր կերպով կը նայի խնդրոյն է-ական կեանքուն վրայ եւ չ'ուզեր վճա-

կանորէն գործել, առանց ի նկատի առ-նելու ստար ազգայ յոռի տրամադրու-թիւններն :
 ՄԱՍԽԱՍ 2010.04.06
 5)18 Մարտ 1909

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ՇԱԽՂԸ
 ԵՐԳԵՑ
 ԱԶՍՏՈՐԴԻ

«Արշալոյս» ի Տպարանէն նոր ըրոյ տեսաւ երիտասարդ հեղինակին լուստտիկ պատկերովը «ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ՇԱԽՂԸ» գրքուիցը :

Չեմնաւ անձերէ գնահատուած է սոյն երկը : գնել փափաքողները պէտք է դիմեն «Արշալոյս» ի տպարանը :

ԻՒՆ ՄԵԿ ՏՐԱՆՅԻ
 Ծանօթ. - Երջականերէն նամա-կադրօք ալ կընդունուի : Եւ մեծաքա-նակ գնողներուն 10 առ հարիւրի զեղջ կըւլայ : 1--4

ՍԱՆՐ ԼՈՒԻՐԵՐ
 Բայց Միլիոններ

== Ամէն օր նորանոր գանձեր երևան կ'ելլեն Երջուրդի որջին մէջ : Առջի օրը խուզարկութիւն կատար-ուելով խիստ թանկագին համրիչ մը գտնուեց է, խոշոր մարգարիտներէ բաղկացած, Այդ համրիչին արժէքը 74,000 սովի կը դնահատուի, Ե-րևան հանուած հաշուեցոյցի մը հա-մաձայն : Եոյնպէս տետրակ մը գա-նուեց է, որով կը յայտնուի թէ Համրիտ հարստութեան մէկ միլիոնէ աքելի ոսկի պանքաներու յանձնը-ուած է, յայտնի չէ թէ այդ գումար-ներուն չէքրը ո՞ւր կը գտնուին : Պատերազմական պաշտօնատուները զը-կուեցաւ 436,000 ոսկի շափ պանքա-տոմս, շատ թանկագին դոհարեղէն-ներ եւ Տոյլէ Պանքի բաժնեթուղթե-րերուն հաշիւը ցոյց տուող թուղթեր : Երջուրդ գտնուած տրիչ երեք դրա-մարկիներ երէկ քննուեցան : Մասնա-գէտները հրաւիրուեցան այդ դրա-մարկիները բահալու համար : Հա-մրիտի երեք արձանները գտնուած են զանազան իրքերով : Պալատան շատ մը տեղերը քաղաքական ու վարչա-կան կարևոր թուղթեր գտնուած են : Մարդուած թուղթակներ, ամենա-փոքր ձայն մը լսելու, կը պո-ւան : Զիւրուս թիւը 250ը կ'անցնի : Համրիտ յարկաբաժնին մէջ անկողին եւ մահճակալ չէ գտնուած : Ամէն սենեակի մէջ երկար բաղկաթուներ եւ ծածկոյթներ կային : Նոյնպէս բոլոր սենեակներուն մէջ բաղկաթի-ղէնքեր ու փամփուշտներ երևան հանուած են :

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԵՐ

Ինչպէս գիտենք Ռուսոյ զեւս պանք ծանուցած էր Ս. Հայրապե-տին թէ՛ Չարը կուզէ որ Ինք Էլ-միլիոն երթալով օժուելէ առաջ Ինթերսոյալի երթալ Կայսեր ներ-կայանալու համար :

Վեհ. Հայրապետը ի պատաս-խանի, նամակ մը գրելով Ռուս գեւսպան Պ. Չինոյիկիին, յայտնած է թէ՛ Էլմիլիոն երթալով օժուելէ ետք միայն կուզէ երթալ Բէլքրա-պուրի ներկայանալու Չարին, ինչ-պէս ըրած են իր նախորդները եւ ինչպէս կը պահանջէ օրինաւորու-թիւնը իրեւ զլուսի եւ պետ եկե-ղիցոյ, եւ այդ հանգամանքով մի-այն կրնայ խօսիլ եւ բանակցել :
 ՀԵՌԱԳԻՐ
 Եկիպտոսի Առաջնորդ Մ. Ս. Վրդ. Աղաւանդի վեհ. Սուլթանին Սրակապութեան հանդէսներուն առ-թիւ շնորհաւորական հեռագիր մը

կրնայ կացութիւնը փրկել : Հա-ւանաբար Հիւրի բաշտ Եպարքոս պի-տի ըլլայ : զալով աղատական կու-սակցութեան, պէտք է հաշտուի ե-րիտասարդ թուրքերուն հետ :

== Երջուրդի ոսկի հանքերուն պեղումները աւարտած են, կը զը-րին Պոլսոյ թերթերը, շատ մը միլի-ոններէ եւ ծանրագին գոհարներէ զատ, Համրիտ յուշատետրը գտնը-ւած է, որուն մէջ Պաղատտի երկա-թուղթը ընկերութեան 9000 բաժ-նեթղթերուն թիւերը նշանակուած են եղեր :

Կրտսի թէ Երջուրդի գոյքերուն ցուցակագրութիւնները աւարտելէ յետոյ, պալատը եւ պարտեղները հան-րութեան աջակցութեանց առջեւ պիտի բացուի Քաղաքապետութեան միջո-ցաւ :

ԿԻԼԿԻՈՑ ԶԱՄԱՐ

== Նայէ Թուրքի Բեհեւ կը գրէ թէ՛ Ատանայի նահանգին մէջ կա-րօտութիւնը խիստ մեծ է : Կը վախ-ցուի որ անթուրքիւնէ եւ հիւանդու-թիւններէ համաճարակ պիտի ծա-ղի : Հետեւաբար օգնութեան ըն-գարձակ գործողութիւն մը անհրա-ժեշտ է :

Անպատասպար մնացած հայ կի-ներուն եւ մանկիկներուն թիւը շատ մեծ է :

Այլեւ բնաւ տարախոյս չ'կայ թէ պաշտօնատարներ եւ զինուորա-կաններ ուղղակի պատասխանատու են անկարգութիւններուն, զորս կամ նախապատրաստեցին եւ ուժ տուին անոնց եւ կամ անտարբեր եւ թույլ գտնուեցան :

== Ելելքէ թ ըստ յայտարարած է թէ՛ Ատանա զրկուած զինուորա-կան ատենը կատարեալ խտու-թեամբ իր գործը պիտի կատարէ, եւ բոլոր դաւաններուն մէջ անգործու-թիւնը պահպանելու համար ամէն շանք ի գործ պիտի դրուի : Իչ մէկի-րի թը պիտի արիւնի, ցորչափ ուժը աղատարար բանակին ձեռքն է : Թո-ղովուրդը պէտք է կատարեալ վտա-հութիւն ունենայ գաւառը զրկուած մեր զինուորներուն՝ վրայ : (Էյի սագ եկիւր եօրեղսէ :)

զրկելով, ն. վեհապառութեան գուլթը հայցած է կրիկիոյ աղետ-եալներուն համար եւ յոյս յայտնած է որ ն. վեհապառութեան իշ-խանութեան օրով վերջ պիտի գա-նեն տիրող անկարգութիւնները :

(Մ. Խ. - Մկրտիչ Վրդ. Աղա-ւանդի այս հոգածու ընթացքը կու-ղենք հաւատալ թէ՛ անկեղծ ըլլա-լու են :

Բայց վարդապետ, ըու. Տէ-րըդ. ըսած է թէ՛ « որ ի սակա-ւուն հաւատարմ է եւ ի բազմին հաւատարիմ եղիցի. » արդեօք կըր-նանք հարցնել թէ՛ ինչո՞ւ Տ. Ե. զիչէ Թորոսեանի պոյքերը, դեր-քերը եւ այլն ձեռք առնելուց կողմէ երկու տարիէ ի վեր՝ հակառակ եղած գիտնալներուն, իրեն չ'են յանձնուիր, ու ձեռք հրամանին եւ տրամադրու-թեան ներքե կ'օշնանան պեղեալի մը մէջ փակուած : Ասկից գործ-նական ապացոյցներէն մէկը պիտի ըլլար ձեռք գէպի հայ ժողովուրդին զաւակները ունեցած հոգածութեան եւ բարեխղճութեան : Հիմալ ժամա-նակը չէ՛ որ ըսենք թէ՛ դուք ձեռք հե-ռագրեցիք մեռագիրներովը մեր աչքին թող փչելու հլեր էք : Լաւ չէ՛ որ այդ փոշիները նախ ձեռք եւ ձեռք չարքը գտնուող զեղնարարնե-րուն աչքին փչէք, եւ յետոյ հայ ժո-ղովուրդին, որ ալ զձեզ լաւ ճանչ-նալու առիթներ եւ գժարազուլթիւնը ունեցաւ :)

ՄԻԱՅ. ԸՆԻ. ԺՈՂՈՎՈՅ ԱՐՈՇՈՒՄ-ՆԵՔԸ

(Ետք. նախ. թիւէն եւ վերջ)

Ե. Նկատելով որ Մատթէոս Գայրքեան աւազակախումբին ըն-կերացող Պետրոս Վ. Սառաճեան, Մեարոս Վ. Նշանեան, Սմբատ ա-րեղոյ Գաղաղեան եւ Ղեւնդ Ա-րեղոյ Պէքեարեան, Պոլսոյ մէջ Ս. Աթոռոյ շահերուն դէմ միշտ ստիճգութեան կրնեն, եւ Երու-սաղէմի Պատրիարքութեան անկախ իրաւասութիւնը չ'ընկալու եւ Պոլսոյ Պատրիարքութեան հետ միացնելու համար ողի ի բռնի կաշխատին, Պոլ-սաղէմի քանի մը կըրքով, ատեղու-թեամբ եւ նախանձով կուրացած ա-ղաներու եւ . . . ներու հետ, ա-ռանց նկատի առնելու թէ՛ ժամա-նակին ալ այդ տխուր փորձը ըրած են, եւ Ս. Աթոռը ամենատակալի կերպով տուած է երկու Պատրի-արքութեան միացնելովը, եւ Ձէյ-թութեան Տ. Կարապետ Կաթողիկոսի, Պոլսոյ Աթոռոյն Գովհանէն Կողոճ մակահուանեալ Պատրիարքի եւ բո-լոր ազգի մեծերուն կողմէ անէճք արտած է, ապագային այդ բանը ձեռնարկողներուն դէմ :

Ահա այդ անէճքը

1. Եթէ որ չ'իցէ հմուտ Ատ-ուսապին Հին եւ Նոր Կտակարանաց եւ տեղեակ եկեղեցական կարգաց ե օրինաց, եւ չ'իցէ սնեալ միաբանու-թեամբ յերուսաղէմ, եւ կատարեալ հմուտ ելից եւ մտից Աթոռոյն եւ ամենայն կարգաց, օրինաց եւ գոր-ծոց նորին, թէ՛ արտաքուստ իցէ եւ թէ՛ ի ներքուստ, այնպիսին ա-գահութեան եւ տգիտութեան ախ-տի ախտացեալ՝ եթէ յանդգնեցի մարդնահաճութեամբ եւ սնապաղաւ-թեամբ Պատրիարք, եւ կամ փոխա-նորդ լինել Աթոռոյն այնորիկ՝ նը-ղովեալ եղիցի :

2. Եթէ ոք ժպրհեցի յաշխարհականաց, Պապա, Նազր, Վեֆիլ, և այլ անուամբ վերակացու և գործակալ կարգել Երուսաղէմի, և ցուցանել նմա զայլ իմն ճանապարհ խոտորնակ, յորմէ պատճառի վնաս Վանուց Ս. Յակոբայ, այնպիսին թէ եկեղեցական իցէ և թէ աշխարհական, նորովալ եղիցի :

3. Եթէ ոք կամիցի և կամ պատճառ լիցի միաւորել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ Պատրիարքութեան Կ. Պոլսի, և կամ ընդ այլ Աթոռոյ, և ոչ յօժարեսցի առանձինն լինել Աթոռոյն այնորիկ որպէս այլոց ազգացն, այնպիսին որոշեալ եղիցի ի Գրէստոնէական Ս. Հաւատոյս :

(Պատմ. Ս. Երուսաղէմի Հատոր Բ. էջ 11)

Ս. յսու ամենայնիւ տակաւին կայստան վերոյիշեալ Վրդ. ներք իրենց ապականուած և գարշելի կերքը յազգեցնելու համար՝ Երուսաղէմի Պատրիարքութիւնը ջնջելու գործին համար, Ա. յս պատճառաւ Միաբանական Ընդհ. Ժողովոյ, անոնք ալ իսպաղ վտարեց միաբանական անդամակցութենէ, որ յետ այսու իբրև միաբան չը խօսին և չը գործեն :

2. Նկատելով որ Ս. Աթոռոյս Պոլսոյ փոխանորդ Տ. Եղիշէ Վ. Զինկիրեան գլուխ անցած է վերոյիշեալ աւաղակախումբ Վարդաց և միջոց Ս. Աթոռոյ շահուց և իրաւանց հակառակ կը գործէ, հակառակ իր պաշտօնի բերման, որոշեց յանձնարարել Պատ. Տնօր. Խորհուրդին. որ զայն ևս փոխանորդութեան պաշտօնէն հրաժարեցընէ, և անոր տեղ ուրիշ մը կարգէ, եթէ այդպէսով ալ զգաստութեան չ'եկաւ և չ'ուզուեցաւ եղիշէ Վ. այն ատեն տեղեկագրէ Միաբ. Ընդհ. Ժողովին, որ անոր մասին ալ իր արդար վճիռը տայ : Ա. յս որոշումները Միաբ. Ընդհ. Ժողովոյ Կիււանը, տեղեկագրով մը յանձնարարեց Տնօր. Խորհրդին ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն և գործադրութիւն :

Տ. Կրիզոստոմոս Արք. Եպիփոպ. Յովնանէսեան որ ժամանակէ մ' ի վեր Ս. Երուսաղէմ կը մնար, վերջերս լսելով թէ՛ ձեռնադրութեան խօսքեր կըլլան. 70 ոսկի կը պահանջէ որ ձեռնադրութիւն ընէ. արդէն Սարկաւագներն ալ սկիզբէն ի վեր երբէք չ'էին ուզելու անակ ցնթածի մը ձեռքէն ձեռնադրուելու, և երբ վանքն ալ այն 70 ոսկիի սակարկութիւնը կը լսէ, ինքն ալ կը մերժէ անոր ձեռնադրութիւն ընելը, և որպէսզի Հնդկաստանի երեքնիկ կողայսխը ժողովոյի առջև նշաւակ չ'ըլլայ. յաջորդ օրը անմիջապէս ճանապարհ կ'ընէ և գէպի Պոլս կը մեկնի : Եւ այսպէս անգամ մ'ալ գրականապէս ցոյց տըուաւ այն թէ՛ ինչպէս 12 տարիներ Օրմանեանի կողմէր գործած. կաշառքով Ազգ. գործերը կը վարէին. ըստ հաճոյս և ըստ կամս :

Ըստ աւետարանի, « ձրի առէք և 70 ոսկիի պուէք ? ? ? » վա՛յ բեղ Գորզին :

ՄԱՇՏՈՅ

Երուսաղէմ

ՆՆՈՒԱՊԻՐ

Կ. Պոլս 16 Մայիս. - Վեհ. նոր Սուրբանը հայերէ բարեկարգած պատճառաւորութեան մը սիրալիր ընդունելութիւն ընելով խոստացաւ քորտերուն յորդոր կարգացող յայտարարութիւն մը ընել, որպէսզի կողոպուտէ ևս պակասութիւններ ևս կեանք ևս խաղաղութեամբ սպրիկ ստակոյն ցեղերուն հետ :

Կ. Պոլս 17 Մայիս. - Պարհանեհիսի մերակալութիւնը կը հաստատուի. Կերտայ թէ իր մերակալան պատճառը Ապրիլ 13 ի ընդունութիւններն են. Բրեկսը Կ. Պոլսոյ պաշտօններէն միոյնն մէջ պիտի մնայ ընդ հսկողութեամբ :

Ասիո-Ապարս 17 Մայիս. - Գահաճաւարդ իշխան Եսամ ուր 13 տարեկան է, անուսնացաւ քաղաքում ընդ իր սարեկան եղբոր սղջկան հետ : Այս խնամարարներ երկուստեք իրարմէն ընկալիքներու և յորս կարող պիտեան միտքեան կարգ պիտի ըլլայ :

Հոռո 18 Մայիս. - Կրտուի թէ՛ Չարք Վիգոր Էմանուէլ թագաւորին այցելութիւն պիտի սայ ի Հոռո, և ակնի Կ. Պոլս պիտի երթայ ևս Սեւ ծովու ճակով Ռուսիա պիտի վերադառնայ :

Կ. Պոլս 20 Մայիս. - Սուրբանը Խորհրդարան զնաց Սահմանադրութեան պահպանմանը համար երեսփոխաններուն երդման ներկայ զնուելու համար :

Մեծ Աեգիոք կարգաց գահաւաճար, որուն մէջ Ն. Վեհախառնարարներ մեծ տեղադրեանց հետ յարաբերութիւն մշակելու վրայ կը շեշտէ, և Ասանայի խոնարհեանց համար ցաւ կը յայտնէ, յայտարարելով թէ՛ անոնք չ'պիտի վերակրկնուին : Ն. Վեհախառնարարներ ևս ըզուր ըրաւ Սահմանադրութեան հաստատում մնայու համար :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Աղեքսանդրիա Տ. Թ. - Մեր նամակի պատասխանին անձամբեր կ'սպասենք :

ՍԻՆԵՄԱԹՈՎՐԱՖ ՎԵՆԻՒՍ

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԻ ԳԱԼՍԵԱՆ Պոլսոյ ճանապարհաւորութիւնը յիմազ քրտնիկի զօրին վրայ ՆՈՐ ԲՐՈՎՐԱՍ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵԿԻՊՏ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ Կարմիր Սուլթանին օրով, Եգիպտական Կառավարութիւնը քանիցս դիմում ըրած էր Բ. Գրան, որպէսզի իր ներկայացուցչին մահուան պատճառաւ բաց մնայած պաշտօնին ուրիշ մէկը անուանուի և նկատողութեան առնուած չ'էր :

Այժմ Պոլսական թերթերէն կը տեղեկանանք թէ՛ Բարձր. Թաիվը վերստին դիմում ըրած է նոր կառավարութեան մօտ, Մահմուտ

Շուքրի բաշան այդ պաշտօնին կոչելու համար :

Բ. ԽՏԻՎԸ

Ն. Բ. Խտիվը՝ իր Կ. Պոլսոյ ներկայացուցիչ Մահմուտ Շուքրի բաշայի հեռագրած է ցաւ յայտնելով որ Վեհ. Սուլթանին Սրակապութեան արարողութեանց առթիւ առաջիններէն եղած չ'է Ն. Վեհափառութիւնը շնորհաւորող :

Ն. Բ. Խտիվը յանձնարարած է Շուքրի բաշային, Ն. Վեհափառութեան ներկայածալ և իր անկեղծ յարգանքները մատուցանել յետոյ, այդ պակասութեան համար ներում խնդրել :

ՆԱՄԱԿ ԵՐՁՆԿԱՅԷՆ

ՃԵՐԱԱԹՃԻՆԵՐԸ

1780 Ապրիլ 909

Նախորդ թղթակցութեամբ իմացուցած էի թէ Դրդ. զորաբանակի զինուորները որքան ջերմ պաշտպաններ կը հանդիսանային Սահմանադրութեան, երբեք պահպանման համար պատրաստակարարութիւն կը յայտնէին մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը թափելու... : Սակայն հաղի թէ մէկ շաբաթ անդաւ Սահմ. զէմ վտանգի մը գուշակութիւնով Պոլսոյ վրայ քաղիւր յանդուրթիւնն ունեցող այդ զինուորներն են որ յանկարծ ըմբոստացան ևս տեղւոյս բոլոր վաշտերուն ի մի ձուլուած էրը Շէրիի պաշտպան հերոսներ հրապարակ եկան՝ վտարելով իրենց զարացական սպաները (*) : Սակայն ո՛վ եղաւ այս շարժումին պատճառը, կամ բուն նպատակը, այդ զեռ որոշապէս չ'յայտնուեցաւ, միայն ինծի ծանօթ զինուորական մը պատմեց թէ Հինգալթի գիշեր թըշուալի պահականոցին մէջ գանձուող Դրդ. նշանի վաշտը երբք պատգամաւոր զրկած են քաղաքի Երք. նշանձի վաշտին, պահանջելով որ իջնու գան ու իրենց միաբան Շէրիի պաշտպանելու համար, սպանուելով նաեւ թէ ընդդիմութեան պարագային զիրենք պիտի պաշարեն ևս հրացանաձուրթիւն կատարեն : Տրդ. վաշտը բոնի կը համակերպի ևս արշալոյսին՝ իջնու պահականոցին կը միանայ որոնք միասին կը գրաւեն ամբողջ թիթանօղները և թիթանօղաձիգ զորքերուն ալ համակերպել կը հըրամային. վերջինս՝ առաջին անգամ կը մերժէ ու ըմբոստացած զինուորները պաշարելով այդ պահականոցն ալ հրացանաձուրթեան փողը կը հնչէ. ներսի զինուորները նկատի առնելով մեծ վտանգը իրենց սպային հրամանով անձնատուր կըլլան ու կը միանան. այս պէս Դրդ. նշանի վաշտը տեղւոյս ամբողջ զինուորները Շէրիի անունով որքի հանելով Ռեքաթ առաւօտ քաղաք իջնելու պատրաստութիւն կը տեսնեն : Կը յարձակին զէնքի մթերարանոցներուն վրայ ու պէտք եղածէն աւելի հրացան նոր եկած փամփուշտ առնելով երեք շորս չ'ստիպելու առաջնորդութեամբ կը քալեն զէպի քաղաք : Նախորդ օրը շած են կողեր իրենց սպանները խոչընդել ու յետոյ հայոց թաղերուն վրայ յարձակել : Բայց իրենց սիրելի մէկ աշայր սպան իրր թէ անոնց այդ իրաւարութիւնը իմանալով՝ յարձակողական գաղափարէն ետ կը կեցնէ ըսելով թէ այդպիսի ընթացք մը կրնայ ծանր վրտանդանի յատկաբերել թէ զինուորներուն և թէ իրենց ազգին նաեւ երկիւղ աւելով թէ հայերը մեծ քանակութեամբ պոճպաներ (*) ունին և թէ ձեզմէ մէկ

հատ իսկ չ'կրնար ողջ ետ դառնալ : Սակայն զեռ շտապագոցաւ թէ հայոց թաղերուն վրայ յարձակելու նպատակներն ճիշտ էր թէ ոչ : Այդ առաւօտ երբ ամեն ոք իրարմէն բաց զորքով ու առեւտուրով կ'զբաղէր՝ յանկարծ լուր եկաւ թէ քաղաքին եւ զըջային ամբողջ զինուորները ըմբոստանալով առանց սպայի պիտի գան ու զինուորական հըրապարակը կենալով Շէրիի գործադրութիւնը պիտի պահանջեն : Ամեն ոք ան ու զողի մատուած խանութք գործեց ու թաղերը գալով սուներու և թաղերու մէջ ինքնապաշտպանութեան ու զիմազրութեան զիրքեր որոշեց, որովհետեւ այս անգամ զինուորներուն հետ էր որ զորք պիտի ունենային ևս հետեւաբար մահու կենաց վերջին րոպէն հասած նկատելով՝ գէթ ոչխարի նման չ'մորթուելու համար միջոցներ ձեռք առնելու պէտքը անհրաժեշտ դարձած էր : Եւ իրապէս ալ, մարաթ առաւօտ ժամը 4 ին (ը. թ.) ըմբոստացողները վերոյիշեալ հրապարակը եկան ու իրենց պահանջները ներկայացուցին մարաթայիսին : Մարաթայիսը յորդորեց որ քաղաքէս 2 ժամ հետաւոր իջուան զիւղի ճամբուն վրայ գտնուող մարգագետին վրայ երթան սպանն 3-4 փամէն պատասխան մ'տանալու համար : Հրամանատար փաշան թէեւ ազատական մարդ ինքզինքը կուտէր, բայց ինչ կրնար ընել այդքան զինուորներուն, քանի որ իր հրամանէն դուրս ելած ևս ըմբոստացած էին :

Զինուորները այդ փոքրիկ հնազանդութիւնը յանձն առնելով գացին մարգագետին վրայ պատասխանի ըստ պահելու, մեկնած ասանինն սեպտիշաճը մը չ'օք ետալա՝ ազատեցելով, մեկնելու ատեն տասնեակ մը զինուորներ հեռադարձուելու կը թափաղով պաշտօնեաները գուրը կը վտարեն և իրենց հեռադրական զինուորներէն թեւեւուն գլուխը նստեցնելով ուղած հեռագիրներն կը գարնեն Պոլս. զիրենք Շէրիաթին և կայսեր ջերմ պաշտպան ներկայացնելով : Ճանեակներով զինուորներ ալ կ'առաւ. չէնքերու դռները կը հսկեն, իսկ քանի մը տասնակներու ալ խոնկութիւն չ'տառեցելու համար շուկաներու պաշտպանութեան կը զրկուին, վերջինս հրահանգը կը թուի թէ այդ աշայր սպայէն ընդունած էին : Մնացեալները 1-2 ժամ մարգագետին վրայ սպասելէ վերջ երբ կը տեսնեն թէ մարաթայիսը իրենց պահանջքին գոհացում չ'տար, պատգամաւոր չ'ապուշ մը կը զրկեն անոր մօտ, որ երթալով մարաթայիսը առջեւէն քանի մը քայլ անդին կեցած հրացաններն մէջ փամփուշտ գետեղելով անոր ճակտին կուղղէ, սպանուելով թէ « մեր պահանջներուն գոհացում չ'տուողին այս ցնդակի հարուածով պիտի պատասխանուի » :

Ստիպման տակ յօժարութիւն կը ցուցնէ անձամբ անուց քով երթալով պահանջքին գոհացում տալու, նըկատի առնելով երկրին հողեղաբը վերձակը որ մէկ ատրճածակի ձայնէն իսկ բաւական էր ապին ու վրայ ըլլալու ու բիւրաւոր անմեղներու արիւնին հոսելուն : Վերջապէս կատք նստելով վաշտը կը հասնի ու ինքն ալ յակամայս կընդունի, երդուենալով յարանիկ վրայ, զոր քանի մը հոճաններ (երկրին ցեցերը) վեր բըռնած զինուորներուն կառաջնորդէին ազօթքներ միմաւով : Երդուի արարողութիւնը կատարելէ վերջ մարաթայիսը կատքով կը վերադառնայ իր տեղը ինչպէս նաեւ զինուորները որոնք մտնելով զինուորականներու քիւլաք տակն ու վրայ կ'ընեն ևս հոտորիկթի վերաբերեալ գրութիւնը նկարներ ջարդ ու փուր ընելով գոնքը կը կըզպեն ու կ'ընքելով դուրս կ'ելլեն, յետոյ կը յարձակին քիւրտերու քիւլային վրայ ու հոն ալ ամէն բան ջարդ ու փշուր ընելով նոյն իսկ անմարտութիւն կընեն ու զոնքը կ'ղղկելով կը հեռանան ճամբան « կեցցէ՛ կայսր » ա-

(*) Պոլսոյ զէպքին հետ քաղաքաւորով մեր բանակի զինուորները աւելի բարեխիտ (*) գտնուեցան իրենց սպաներուն հանդէպ որ չը կ'պիտեցին ու չ'պահանջէին : Ս.

ՄԵԾ ՎԱՃԱՌԷՏՈՒՆ ԾԻՄԱԿՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻՎԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱՃԱՌԷՏՈՒՆ ԵՒ ՊԻՆՈՒԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԵՔԻՅԷ

Պարտադրողն անձնավրտիքի թէմայէքի ալ և ալ տեսակները բայի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնիլը պարզապէս սխալ է:

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ամենաթեմայի, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործարարները սրտիցով սպարմանը թարմութեամբ անմրցելի է, որուն անտիտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ ստուար թրով եղած յանձնարարութիւններն են:

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ



ՄԵՓԱԿԱՆՆՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է:

Պարտադրողն անձնավրտիքի թէմայէքի ալ և ալ տեսակները բայի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնիլը պարզապէս սխալ է:

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ամենաթեմայի, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործարարները սրտիցով սպարմանը թարմութեամբ անմրցելի է, որուն անտիտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ ստուար թրով եղած յանձնարարութիւններն են:

Պարտադրողն անձնավրտիքի թէմայէքի ալ և ալ տեսակները բայի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնիլը պարզապէս սխալ է:

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ամենաթեմայի, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործարարները սրտիցով սպարմանը թարմութեամբ անմրցելի է, որուն անտիտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ ստուար թրով եղած յանձնարարութիւններն են:

ՍԱՐՀՈՏ

ՄԱՆՈՒՅՈՒՄ

Հայ Մուսայից առաջին շարքին մէջ իրաւամբ ընտիր տեղիւր կը գըրաւէ՝ հանրամասնութեամբ բանաստեղծ Մկրտիչ Աճէմեան՝ իւր քերթումով անբողական հրատարակութեամբ՝ այս անգամ Տէր Ներսէսեան Տպարանէն սքանչելի տպագրութեամբ ի լոյս ընծայուած:

Ինթրաքայի քնարին գուրբիկ թելերը հայեցի մատամբ թրթուացնող մեծանուն քերթողին այս նըսապները անոյշ տխրակին գմայլեցուցելը դաշտայինները կը յիշեցնեն մեզ և չափազանցութեան դէմ բընաւ մեղանշած շենք ըլլար երբ քանիք թէ լաւադոյն ընթերցանութեան գիրքն է որ կրնայ յատկացուիլ ոչ միայն ամէն դպրոցականի ալ նաև ամէն գրասէր հայու համար անխտիր:

Գին 12 ԴԿ.

Վաճառման կեդրոնատեղին է Հաղարթա - Իզմիրի Օղլու Խան - Բիւլանդեան Գրատունը:

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիւմայ. Գաֆէ Տր Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱԿԵՐՈՒՄ ԵՂՁ ՄԱՍՆԱՃԻՒԴԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրներն են և ասանցմէ մինչև ցարգ 17,000,000 ծախուած է:


400 և աւելի վիսյակներ և մեքանիզմներ վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
Ա.Ռ.Ա.ՉԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ առացած է:
ՀԱՌԹԱՅԻՑ ԲՐՈՒՄՈՅ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՐՈՒՆԻԿԷՐ
ՀԱՌԹԱՅԻՑ Ե. Բ. ՆՏԻՎԱԳԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկէրի յանգանշիմ

Գին ՉԱՓԱՌՐ



ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Արդեօք ի՞նչ կանցնի կը դառնայ հիմա Սուլթան Ապաիւր Համիտի զլխուն մէջ, իր աքտորալայրը: Այս հարցումին կը պատասխանէ Ա. Պալանի «Սուլթան» թերթը:

— Սաւանայի երէկուան կոտորածը պարզ կրկնութիւնն է Աւրփայի կոտորածին, որուն քառամեջուցիչ պատմութիւնը կարգալ յոյն հեղինակին «Թըրքուհի» գրքովու, գին 50 Սանթիմ: Գրեմէլ առ

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

Այլ հոգ մի՛ ընէք թէ ձեր կարի մեքենաները Շաշալի մը գլխուն վրայ դրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար:

Պ. Սարգիս Թաշեան իրեն գիմող շատ մը յաճախորդներին քաջախիտած, ատենէ մը ի վեր իր պաշտօնը թողլով, յատուկ կողմ պատրաստած է և է իր շրջուն ու շարժական խանութը «Վարձ» ին (անոր պատիկ ձեռն անունն է) բարձած ամէն թաղէ կանայնի ամէն օր և ամէն ժամ:

Չինքը ճանչնալու դժուարութիւն չկայ: Պատիկ ձեռն մը քաջած կառքին վրայ երբ մեքենաներու գործընկեր տեսնէք, որուն չորս կողմը ամէն ինչուով գրուած է, մասնաւոր Reparation des Machinesը, անմիջապէս կա՛մ «Վարձ» յիշեցէք, և կամ քիչ մը անպիս Սարգիս Թաշեանը տեսնել ուղեցէք, իր կապուտ կապէ բոստային մէջ, անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կը ընէ անմասն յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայիտ:

Չմոռնալ նաև կապի վառարաններու և ֆոֆոկրաֆներու նորոգութիւնը և նորոգութեան հայթայիտութիւնը:

Պ. Թաշեան այս գիւրու թիւները ընծայելով իր նմաններուն ճառագած ըլլալու դժուարութիւնը պիտի ունենայ, և քիչ մ'ալ գրամ շահիլ պիտի ուզէ, իր պիտիակներուն դատարարութեանը յատկացնելու համար:

Mr. A. Balian
Le Caire
Egypte

ԳՅՏՈՒԹԵՐԵՆ
Լոգանի Հայկազեան Վարժարանին Տնօրէն Մ. Նաչարեանի Տր. Գիսմէտեանց

Բաւնեզիլը Երուսալ 7 Ճրակգ. Թորփիա 30 րշ. Ամերիկա 1 1/2 Տօրս. Ռուսիա և Պարսկաստան 3 Րոպրի: Հաւցե Mr. M. Nalbandian Institut Arménien (Suisse) Lausanne